

ՄԻՋԱՆ ԲՆԱՐ

Տաղ վարդապետին .

Այսօր ցընծայր լեառըն թաբօր , եւ զուարճանայր մեծն Ահերմնն ,
Քանզի լոյսն աստուածային՝ այսօր ծագեաց յայն սուրբ լերինն
Այ ցընծայ , այ ցընծայ լեառըն թաբօր եւ զուարճանայ :

Այսօր թաբօր լեառն ուռճացեալ , լուսատեսիլ ծաղկով լըցեալ .
Քանզի քրիստոս մարմնով ծաղկեալ , եւ զԱդամայ փառսն ցուցեալ .
Այ ցընծայ , այ ցընծայ , Ադամ Եւայ եւ զուարճանայ :

Այսօր վարդըն անուշահոտ բուրեաց ըզհոտն աստուածային .
Փրթթեալ հասակն երեսնամին , յայտնեաց զծածուկ լոյսն ի մարմինն .
Այ ցընծայ , այ ցընծայ , վարդէդ * ամեն եւ զուարճանայ :

Այսօր մեծ վարդըն վառեալ , կարմիր սպիտակ լուսով փայլեալ .
Կանաչ գունով գեղաւորեալ , ապա զդեղին լոյսն ցուցեալ .
Այ ցընծայ , այ ցընծայ , վարդըն վառեալ եւ զուարճանայ :

Այսօր լուսին 'նդ արեգական , եւ աստեղաց պարքն ամենայն ,
Տեսին ըզտէր արփիական , իւրեանց լուսոյն նըւազեցան ,
Այ ցընծայ , այ ցընծայ , աստղունքդ ամեն եւ զուարճանայ :

Այսօր Մովսէս մեծ մարգարէն կենդանացեալ գերեզմանէն
Եկն ի թաբօր մօտ ի Որ Էն , ունէր զտախտակըն քարեղէն .
Այ ցընծայ , այ ցընծայ , սուրբ մարգարէն եւ զուարճանայ :

Այսօր եկեալ մեծն Եղիա , որպէս եկեալ ի Գորեբայ
Դաւանէր ու երկըրպագէր , աստուած ասէր ըզՄեսիա ,
Այ ցընծայ , այ ցընծայ , սուրբ Եղիա եւ զուարճանայ :

Այսօր Մովսէս 'նդ Եղիայի խօսին զելիցն հետ քրիստոսի .
Տէր , փութով ի խաչըն եկ , զի դու փրկիչ ես յաշխարհի .
Այ ցընծայ , այ ցընծայ , սուրբ նահապետն եւ զուարճանայ :

Այսօր Մովսէս լալով ասէր . հոգիք ամեն քեզ կու մընան ,
Ձի դու գաս եւ չարչարիս եւ ազատես զոգիս նոցա .
Այ ցընծայ , այ ցընծայ՝ արդար հոգիք եւ զուարճանայ :

Այսօր Պետրոս , Յակոբ , Յոհան հետ քրիստոսի ի լեառն ելան ,
Լըւան զբարբառըն հայրական , Դա է որդի իմ սիրական .
Այ ցընծայ , այ ցընծայ Յակոբ Յոհան եւ զուարճանայ :

* Թերևս վարդեր :

Այսօր Պետրոս վէմ պատրաստէր, տաղաւարաց հիմն արկանէր,
Բայց Յիսուս խորան շինէր՝ իւր սիրելեաց տեղ պատրաստէր,
Այլ ցընծայ, այլ ցընծայ սուրբ ճգնաւորք եւ զուարճանայ:

Այսօր Հոգին ամպ երեւեալ իւր էակցին հովանացեալ
Ճառագայթիւք զփրկիչն յայտնեալ, առաքելոց գունդքն հանգեալ:

Այլ ցընծայ, այլ ցընծայ, սուրբ Առաքեալն եւ զուարճանայ:

Այսօր Հայր յամպոյն ձայնեալ եւ Միածնին իւր վրկայեալ
Դա է որդին իմ մարմնացեալ, Հոգւովս ի գմա եմ հաճեցեալ:

Այլ ցընծայ, այլ ցընծայ, երկինք լերկիր եւ զուարճանայ:

Ա Ղ Ա Ի Ն Ի

ԺԷ

Իր անհրաժանդ ընկերներէն ազա-
տելէն ետքը, Օրսոյ ճամբան կը շարու-
նակէր, աւելի բարեկամները գտնալուն
ուրախութեանը վրայ մտածելով, քան
թէ թշնամիներն իր առջևը գտնալու
վախէն պաշարուած: — Պիտի բռնա-
դատուիմ ան դատաստանին համար որ
այդ ցածազգի Պարրիչինիններուն դէմ
պիտի բռնամ, կ'ըսէր մտքէն, Պասդիա
երթալու. աս առթով Նէվիլ օրիորդին
ընկերութիւն կ'ընեմ դէպ 'ի հոն եր-
թալու. անկէց ալ կրնանք մէկտեղ Օ-
րէցցայի ջրերուն երթալու: Յանկարծ
մանկութեան յիշատակները միտքն ե-
կան ու յիշեց այն նկարակերտ տեղը.
մտքով ինքզինքը կանաչազարդ մար-
դագետնին մէջ գտաւ ծեր շագանակի
ծառերու քով: Դալար խոտին վրայ, ուր
սփռած կապոյտ ծաղիկները կարծես
թէ աչքեր էին որ իրեն կը նայէին, կը
տեսնէր զլիւզիա իր քովը նստած, և
մէկտեղ մտերմաբար կը խօսէին: Այս-
պիսի քաղցր մտածութիւններ մտքին
մէջ յեղեղելով, ուշադրութիւն չէր ը-
ներ քալած ճամբուն: Մէյ մ'ալ յան-
կարծ ձին կանկ առաւ. որովհետեւ պրզ-
տի Գիլինան դիմացն առեր էր ու սան-
ձէն բռներ:

— Ո՛ր կ'երթաս, Օրս' Անտոն, ըսաւ
աղջիկը. չես գիտեր որ թշնամիդ հոս
մօտիկ է:

— Թշնամիս, աղաղակեց Օրսոյ բար-
կութեամբ թօթափելով իր ախորժելի
երևակայութիւնները. ո՛ր է:

— Հոս մօտ է Օւլանտուչիոյ. քեզի
կը սպասէ: Ետ դարձիր, ետ դարձիր:

— Կը սպասէ ինծի. տեսա՞ր զինքը:

— Այո, Օրս' Անտոն. ես թուփերուն
մէջ պառկեր էի՝ երբոր ինքը անցաւ.
չորս դին կը նայէր դիտակով:

— Ո՛ր կողմէն կ'երթար:

— Հոնտեղէն վար կ'իջնար դէպ 'ի
այն կողմն ուր դու կ'երթաս:

— Շատ աղէկ. շնորհակալ եմ:

— Օրս' Անտոն, չես սպասեր հօրեղ-
բօրս. քիչ ատենէն կը հասնի, և ան ա-
տեն ապահով կ'ըլլաս:

— Մի վախեր, Գիլինա. ես պէտք
չունիմ հօրեղբօրդ:

— Թէ որ կ'ուզես, առջևէդ երթամ:

— Պէտք չէ:

Եւ մտրակելով ձին, աղջկան ըսած
կողմը դնաց:

Սկզբան բարկութեամբ աչքը դար-
ձած՝ ըսեր էր մտքէն թէ ձեռքէ չփախ-
ցնէ աս առիթն Օւլանտուչիոյի ցա-
ծութիւնը պատժելու, որ կերած ապ-
տակին վրէժն առնելու համար՝ ձիու
մը ականջը ճղքեր էր: Ետքը քաղաքա-
պետին տուած խոստմունքը, մանա-
ւանդ Նէվիլ օրիորդը չտեսնելու վախը